



0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01

Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 04-2

«21» 01 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 03-Ի N° 01-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետի, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ
հոդվածների պահանջներով և հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր»
փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրենի
տեղակալ-գլխավոր հաշվապահի (N° Ն/02/255-2022) և տնտեսական բաժնի պետի
(N° Ն/26/239-2022) «Mulberry» էլեկտրոնային համակարգի 2022 թվականի հունվարի
19-ի գրությունները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 03-ի «Բարձրավոլտ
էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության տարեկան գույքագրման մասին»
N° 01-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետի 1.2.1 ենթակետում կատարել հետևյալ
լրացումները.

1) «Ընկերության ք.Երևան, Զ.Անդրանիկի 1 հասցեում գտնվող վարչական մասով»
բառերից հետո լրացնել «և ք. Երևան, Բագրատունյաց 6 փ., 12 հասցեում գտնվող
գույքի մասով» բառերը,

2) «Հենրիկ Հարթենյան - Ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի
մասնագետ» բառերից հետո կազմը լրացնել «Տիգրան Մարգարյան - Ընկերության
տնտեսական բաժնի տնտեսավար» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ